


ՀԱՄԱԶԱՍԴ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ









ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АМАЗАСП АМБАРЦУМЯН

(Биобиблиография)

Составитель и автор предисловия: канд. фил. наук
Р. А. ГРИГОРЯН

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ЕРЕВАН — 1980

Ճ 16278


✓

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

(Կենսամատենագիտություն)

Կազմեց և առաջաբանը գրեց՝ Բան. գիտ. թեկն.
Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն — 1 9 8 0

1372-80

Խմբադիր՝ ՀՍՍՀ ԳՍ. թղթակից անդամ, պրոֆ. էդ. Մ. Զարաշյան

Գրիգորյան, Ռ. Հ.

Գ 888 Համադասող Համբարձումյան (Կենսամատենագիտություն) / Կազմ. և առաջաբանը Ռ. Հ. Գրիգորյան. Խմբ. էդ. Զրբաշյան.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1980.— 40 էջ:

Համադասող Ասատուրի Համբարձումյանի ծննդյան 100-ամյակի առթիվ հրատարակվող կենսամատենագիտությունն ամփոփում է գիտնականի կյանքի և գործունեության համառոտ նկարագիրը, ստացված աշխատությունների մատենագիտությունը, նրա մասին եղած դրականության, ինչպես նաև ձեռագիր աշխատությունների այբբենական ցանկերը:

4503010000
Գ $\frac{704(02)-80}{704(02)-80}$ ՏՈ—898—80

016:8+8ԱԲ2
ԳՄԴ 91.9:83+83.32Դ

Հ. ՀԱՄԱՐԱԶՈՒՄՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Համազասպ Ասատուրի Համբարձումյանը ծնվել է 1880 թ. սեպտեմբերի 25-ին Բասարգեշար (Վարդենիս) գյուղում Ասատուր Համբարձումյանի տոհմիկ նահապետական ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է գյուղի տարրական դպրոցում, այնուհետև Նրևանում և այսպես 1894 թվականից՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1897 թ. Համբարձումյանն ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, որը նրան չի հաջողվում ավարտել: Իր առաջադիմական (աթեիստական և դարվինիստական) հայացքների պատճառով նա հեռացվում է ճեմարանից և 1901 թ. Թիֆլիսի արական երկրորդ գիմնազիայում հեռակա կարգով քննություններ հանձնելով՝ ստանում է հասունության վկայական:

Ուսման մեծ տենչը նրան նորից տանում է Մոսկվա, ուր նա ընդունվում է համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և այսպես տեղափոխվում Պետերբուրգ:

1904—1908 թթ. նա Պետերբուրգի կայսերական համալսարանի ուսանող էր: Այստեղ նա ունկնդրում է ժամանակի խոշոր գիտնականներից Պետրաժեցկուն, Կովալեցկուն, Տարլեին, Մառին և ուրիշների: Նույն տարիներին նա զուգահեռաբար համալսարանի մյուս բաժիններում իբրև ազատ ունկնդիր լսում է դասախոսություններ հոգեբանություն, տրա-

մաքանություն, պատմություն, կենսաբանություն առարկաներից:

Նրա հայացքների հետադա ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունենում պրոֆ. Պետրաժևցկին, որը համալսարանում փրավոնքի տեսություն էր դասավանդում: Այդ ընթացքում Համբարձումյանը բազմաթիվ հանդիպումներ և զրույցներ է ունենում Վալերի Բրյուսովի հետ, որի ազդեցությունը շատ կոդմերով պայմանավորում է նրա գրական-թարգմանչական գործունեությունը:

1908 թ., ավարտելով Պետերբուրգի համալսարանը, նա ընտանիքով հաստատվում է Թիֆլիսում և սկսում իր իրավաբանական գործունեությունը: Սակայն 1911 թ. մի համարձակ ելույթից հետո նրան վրկում են դատապաշտպանական իրավունքից, և նա իրեն նվիրում է մանկավարժական գործունեության՝ մասնավոր դասեր տալով Թիֆլիսի տարբեր ուսումնական հաստատություններում՝ 14-րդ պետական տեխնիկումում, Տեր-Ստեփանյանի մասնավոր կուրսերում, Թանդոյան և Գայանյան դպրոցներում, որտեղ դասավանդում է տրամաբանություն, ռուս և օտար գրականություն, քաղաքատնտեսության հիմունքներ, առևտրի իրավունք և այլն:

Ակաճ 1903 թ. Հ. Համբարձումյանը ղբադվում է հասարակական և գրական գործունեությամբ: «Բանբեր», «Գործ» և այլ հանդեսներում, «Մշակ», «Արշալույս», «Հորիզոն», «Закавказская речь» լրագրերում տպագրվում են նրա բանաստեղծություններն ու թարգմանությունները, ինչպես նաև գրական-հրապարակախոսական հոդվածները:

Մեկը մյուսի ետևից լույս են տեսնում Հ. Համբարձումյանի բանաստեղծությունների ժողովածուները և թարգմանությունները: Ղ. Աղայանն այդ տարիներին հրատարակած

իր «Ուսումն մայրենի լեզվի» դասագրքի 4-րդ գրքի մեջ տեղ է տալիս նաև Հ. Համբարձումյանի աշխատանքային երգերին (1906 թ. Թիֆլիս): 1903 թ. լույս է տեսնում «Արյուն էջեր» ժողովածուն, ուր բանաստեղծի հախուռն էությունը արտացոլված է հենց առաջին բանաստեղծության հետևյալ տողերում. «Օ՛, տվեք ինձ լույս կամ կոիվ անդադար»:

Դժգոհություն իրականությունից, բողոք և ընդվզում, հուսահատական անկումայնություն, բայց և հավատ լուսավոր գալիքի նկատմամբ. «Թեկուզ ուշ, բայց կբացվի արշալույս»,— հավատով գրում է բանաստեղծը: «...Այս մթին խավարում կսպասեմ ես աղատ սուրբ գարնան գալստյան...»: Ժողովածուն ներծծված է խոհական տրամադրությամբ:

1904 թ. Ալեքսանդրապոլում Համբարձումյանը հրատարակում է իր թարգմանական բանաստեղծությունների ժողովածուն, ուր ջնդգրկված էին Շելլեի, Բայրոնի, Հայնեի, Լոնգֆելդի, Նադսոնի, Լերմոնտովի, Հեգիոդի և ուրիշների ստեղծագործությունները:

Պատահական չէր նման ընտրությունը. բանաստեղծությունների նախորդ գրքի տրամադրությունների յուրօրինակ շարունակությունն էր այդ թարգմանական ժողովածուն: Հիշված հեղինակներից ընտրված էին հատկապես խոհական, փիլիսոփայական երկերի այնպիսի նմուշներ, որոնք համահնչուն էին բանաստեղծի տրամադրություններին և զալիս էին լրացնելու սեփական ապրումներն ու հույզերը:

Նույն թվին Պետերբուրգում Հ. Համբարձումյանը հրատարակում է ուշագրավ մի ժողովածու՝ «Անհունի էջերում» խորագրով, որը նախորդ ժողովածուի տրամաբանական շարունակությունն էր: Ժողովածուն բացվում է «Ընթերցողին» բանաստեղծությամբ: Բանաստեղծը ոչ մի լավ բան չի խոստա-

նում ընթերցողին, քանզի նա «սուգ ու մրուր է ըմպել անդադար», կյանքի դառնությունները նրանից խլել են հոգու բերկրանքը ու հաճախ «նիղել գերություն», ողջ աշխարհին «մշուշ է պատել», «անհուն ցավերով է աուկցուն աշխարհը», ուստի և բանաստեղծը չի երգելու ուրախ ու անհոգ երգերու Սյստեղ Համբարձումյան-բանաստեղծի անհատական «վիշտն ու հոգսը» ստանում են համամարդկային երանգ. նա սոսկ եղերերից չի հյուսում, այլ փորձում է թոթափել կապանքները և վեր հլնել, ուղի հարթել «դեպ ազատություն».

Հարենեմ նեղ ու մութ կյանքիս կապանքին,
Փշրեմ և ազատ թափով սլանամ,
Արժվի պես վեհ, ամպերի փեշին
Սուրբ ազատություն գրկեմ ու երթամ¹:

Հոգեկան ծանր առփայտանքները նրան հասցնում են «ազատության իդեալին և նա ըմբռնում է «եռորհուրդը կյանքի».

...եվ ես իմացա զառուստը դարնան
Ու ես իմացա իմաստը կյանքի...
Ու ես իմացա
Թռիչքը մտքի²:

Եվ ահա այս ինքնագիտակցությունն ու իմացումը ավելի որոշակի ու ակնբախ են դառնում 1905 թ. հրատարակված «Հայարտ հոգու երգերից» ժողովածուում:

Ու միտքս աղա՛տ... ես էլ լավ գիտեմ,
Որ կյանքը այս կերպ չի մնա խավար,

¹ Արյուն էջեր, Թիֆլիս, 1903, էջ 30:

² Անհունի էջերում, Պետերբուրգ, 1904, էջ 115:

Հորձանքը արյան, կեղծիքը դժխւմ
Հլուրեր՝ են միայն, կանցնեն աննշմար՝

Եվ բյուր հրանի նրան, ով պետք է տիանի «...այն ջինջ
երկնքում հաղթ լուսը զարնան, հաղթ ազատություն»:

Եթե նախորդ ժողովածուների հուսահատական տրամա-
դրությունները պայմանավորված էին կյանքում ունեցած
անհաջողությամբ, ժամանակի քաղաքական իրավիճակով,
ասլա աչստեղ հեղինակը վերագտնում է իրեն, նրա ձայնը
հնչում է կենսահաստատ ու խրոխտ, մտորումները զառնում
են առույգ և լավատես.

Ամեն տեղ հպարտ իմ միտքն ու տենչանք,
Որպես անմեկի ու ջերմ ընկերների,
Ինձ հետ կլինեն և իբր արեգակ
Հավերժ կշողան ազատանվեր
Հոգուս երկնքում...

Իր գրական-հասարակական գործունեության ընթացքում
Հ. Համբարձումյանը բազմիցս շփուվում է հայ առաջափոր
մտավորականության ներկայացուցիչների՝ Հ. Թումանյանի,
Դ. Դեմիրճյանի, Ալ. Մատուրյանի, Հ. Կուսիկյանի, Ա. Իսա-
հակյանի, Վահան Տերյանի, Ա. Սպենդիարյանի, Պ. Մակինց-
յանի հետ, որոնք խոշոր դեր են կատարում նրա գրական-
հասարակական հայացքների կազմավորման գործում: Հն-
տադայում Հ. Համբարձումյանն իր հոշերում ջերմ դրվատան-
քով է արտահայտվել այդ և ուրիշ գործիչների մասին:

1905—1906 թթ. նա ընտրվում է «Արշալույս» թերթի
խմբագրական կոլեգիայի անդամ, իսկ 1918—1922 թթ.,
հաշվի առնելով նրա տնտեսագիտական խոր գիտելիքները,

³ Հպարտ հոգու երգեր, Թիֆլիս, էջ 55:

նրան նշանակում են հողագործական միության կենտրոնական խորհրդի քարտուղար, Համբարձումյանը այդ տարիներին արդեն բանաստեղծական մի քանի ժողովածուների հեղինակ էր, որոնք նրան ճանաչում էին բերել 1921 թ. նրան ընտրում են Հայ գրողների ընկերության վարչության անդամ, ապա նաև ընկերության նախագահի՝ Հ. Թումանյանի տեղակալ:

1924 թ. Համբարձումյանի ընտանիքը տեղափոխվում է Լենինգրադ՝ մշտական բնակության: 1925 թ. նա աշխատանքի է անցնում Լենինգրադի ֆինանսական բաժնում, որպես տնտեսագետ: Միևնույն ժամանակ ֆինանսատնտեսագիտական ինստիտուտում վարում է դոցենտի պաշտոն՝ դասավանդելով «Քաղաքատնտեսության հիմունքներ» առարկան: Զբաղվում է նաև գրական-ստեղծագործական աշխատանքով:

1927—29 թթ. Վիեննայում երեք հատորով լույս են տեսնում նրա ստեղծագործությունները: Այդ հրատարակությունն ընդգրկում էր նրա բանաստեղծությունները, պոեմները, ուսուստար հեղինակներից կատարած թարգմանությունները, ինչպես նաև դյուդական էսքիզներ, ժողովրդական բանահյուսության (իր կողմից գրառած) նմուշներ: Երկերի եռահատորյակի տառաջին հատորն ամփոփում է բանաստեղծի վաղ շրջանի աշխատանքային, խոհական, փիլիսոփայական բանաստեղծությունները, ուր գովերգվում է նոր կյանք ստեղծող մարդը, նրա աշխատանքը: Բանաստեղծը կոչ է անում աշխատել ու ստեղծել «նոր աշխարհ», բերկրություն, «նոր արև ու լույս սփռել աշխարհին»: Բանաստեղծությունների այս

շարքով նա կոչ է անում «այրել կյանքի սուտն ու կարիքը» և փոխարենը «նյութել նոր աշխարհ, նոր արև ու բարիք»⁴։

1928 թ. հրատարակվում է Հ. Համբարձումյանի երկերի ժողովածուի 2-րդ հատորը։ Հատորը կազմված է հետևյալ բաժիններից. Ա. Ութնյակներ, Բ. Զեղում և պեղում, Գ. Անուշ և կամուրջ, Դ. Երգ երգոց, Ե. Թաղամանական։ Հատկապես հարուստ է «Թարգմանական» բաժինը, ուր ամփոփված են Գորկու, Լերմոնտովի, Գյոթեի, Օմար խյամի, էզգար Պոի, Վեռլենի, Բայրոնի, Հաջնի, Շելլիի, Հեղինոյի ստեղծագործությունների թարգմանությունները։ Երկերի ժողովածուի 3-րդ հատորը, որը լույս տեսավ 1929 թ., ամփոփում է մեծ կտավի գործեր, պոեմներ և արձակ ստեղծագործություններ, ինչպես նաև բանաստեղծություններ, ուր Համբարձումյանը հաճախ անդրադառնում է հայրենի գեղատեսիլ բնության, լեռնաշխարհի պերճ գեղեցկության նկարագրին և բուռն կարոտով ու սիրով դովերգում այն։ Հատկապես հետաքրքիր է ժողովածուի «Մեր կյանքի իմաստուններ», «Պատկեր և ժպիտ» բաժինը։ Մանրապատումի այս շարքը Հ. Համբարձումյանի կողմից գրի է առնվել տակավին դարասկզբին հայրենի Բասարգեշար գյուղում։ Բանահավաքի բնածին շնորհքը նրան հնարավորություն է ընձեռել գրառելու բաղմամբիվ ժողովրդական ստեղծագործություններ՝ պահպանելով նրանց բուն ժողովրդական առանձնահատկությունները՝ բարբառը, ժողովրդական ոճին հատուկ բառ ու բանը, երանգավորումը։

Ծոհաստորյակով հանրագումարի էր բերվում Համբար-

⁴ Հ. Համբարձումյան, Բանաստեղծություններ, Վիեննա, 1927, էջ 59—61։

ձուլման-գրական գործչի ալիքի քան երկու տասնամյակի ստեղծագործական կյանքը իր հիմնական արդյունքներով:

1937 թ. սկսած Հ. Համբարձումյանը բոլորեքյան նվիրվում է գրական աշխատանքին: Հայաստանի պետական հրատարակչության պատվերով հին հունարեն բնագրից թարգմանում է էսքիլեսի «Շղթալված Պրոմեթևսը»՝ թարգմանությունը կցելով պատմադիցաբանական արժեքավոր մեկնաբանություններ և ծանոթագրություններ: Այս, ինչպես նաև Սոփոկլեսի և Եվրիպիդեսի մի շարք երկերի թարգմանությունները լույս են տեսնում 1950 թ. «Հուլյն ողբերգականեր» գրքում:

Հ. Համբարձումյանն իր գրական գործունեությունը շարունակում է նույնիսկ Հայրենական պատերազմի ծանր տարիներին՝ Լենինգրադի շրջափակման դաժան օրերին նրա ընտանիքը էվակուացվում է Թաթարական ինքնավար հանրապետության Ելաբուլա քաղաքը և միայն 1944 թ. տեղափոխվում է Հայաստան ու մեկընդմիշտ հաստատվում Երևանում:

Այդ տարիներին նա ամբողջացնում է Հոմերոսի «Իլիականին» և «Ոդիսականին» հին հունարեն բնագրից թարգմանություն աշխատանքները: Մինչև աշխատանքն սկսելը, ապա նաև թարգմանության ընթացքում նա հոմերոսի տական մեծածավալ գրականություն է ուսումնասիրում, ծանոթանում Հոմերոսի վիպերգությունների աշխարհի տարբեր լեզուներով կատարված թարգմանություններին, ուսումնասիրում է թարգմանական արվեստի տեսական և մեթոդաբանական սկզբունքները: Նա խորապես հետազոտում է Հոմերոսի հայ թարգմանիչների (Ա. Բագրատունի, Ե. Թումաճյան, Ա. Ղազիկյան) գրաբարյան թարգմանությունները և «Իլիականն» ու

«Ողիսականը» նորովի ներկայացնում հայ հասարակության դատին: Թարգմանական արվեստի տեսական հիմնավորման, նրա հասարակական արժեքի հարցերին Համբարձումյանը անդրադառնում է 1954 թ. լույս ընծայած «Հոմերոսի հայերեն թարգմանության մասին» ուսերկն հոգվածում, ուր գրել է. «Ամենափոքր նահանջը ճշգրիտ համարժեքությունից և նույնությունից կարող է խաթարել թարգմանության հասարակական ֆունկցիան և շփոթություն առաջացնել մարդկային հաղորդակցության պրոցեսում»:

Ի սկզբանե դավանելով թարգմանական արվեստի այս սկզբունքին՝ Համբարձումյանն անդրադառնում է Մխիթարյան միաբանների՝ Թոմաճյանի, Բագրատունու և Ղազիկյանի թարգմանություններին: Մանրադնին քննությամբ նա բացահայտում է Մխիթարյան միաբանների ձևոնարկած գրաբար թարգմանությունների լեզվաոճական խրթնաբանությունները, նրանց դավանած կլասիցիստական ուղղության և կրոնական դադափարախոսության ազդեցությամբ հոմերոսյան վիպերգություններ ներթափանցած որոշ շեղումներ: Ըստ ամենայնի բարձր գնահատելով նրանց աշխատանքը՝ նա վեր է հանում այն թերությունները, որոնք ժամանակի հասարակական պայմանների և գրական պատկերացումների հետևանք էին:

Ը. Համբարձումյանի թարգմանությունների խոշոր արժանիքը պետք է համարել այն, որ նա, չհետևելով նախորդ թարգմանիչների, օրինակ՝ Թոմաճյանի սկզբունքին, որը երբևից հոմերոսյան տողերը վերաշարադրում, վերապատում էր իր բառերով, ձգտեց ըստ ամենայնի հարադատ մնալ հոմերոսյան յուրաքանչյուր տողին, բառին ու դարձվածքին: Խստորեն հետևելով պատմականության սկզբունքին՝ նա

պահպանել է նաև որոշ հնագույն (արխայիկ) դարձվածքներ ու բառեր (օրինակ՝ կորդակաճոճ, լուսածղի, երկայնաստվեր): Հարազատորեն պահպանված է նաև հունական դիցաշխարհի անվանակարգությունը: Այսպես, Զեսը Զևս է և ոչ թե Արամազդ, Աֆրոդիտեն՝ Աֆրոդիտե և ոչ թե Աստղիկ, ինչպես թարգմանում էին Թումաճյանն ու Բազրատունին:

Ինչպես հայտնի է, հոմերոսյան վիպերգությունների առանձնահատկություններից են էպիկական որոշ հատվածների, բանաձևերի, մակդիրների կրկնությունները: Նախորդ թարգմանիչներից Արսեն Բազրատունին զանց է առել դրանք՝ յուրաքանչյուր անգամ վերակաղմբելով կամ ցիտակցորեն բաց թողնելով այդ հատվածները: Հ. Համբարձումյանն այդպես չի վարվում նախ այն պատճառով, որ կրկնությունները, իրոք, տվյալ էպիկական ժանրի կարևորագույն յուրօրինակություններն են, և ապա, ինչպես գրել է նա արդեն հիշատակված հոդվածում, «Թարգմանության խիստ համարժեքության և բնագրի հետ նրա նույնության խնդիրները, կապված հեղինակի իրական մտածողության ճիշտ վերարտադրման անհրաժեշտության հետ, ստիպեցին հրաժարվել նման վարժություններից և Հոմերոսի հետ «մրցելու» գայթակղությունից»:

Իրոք, Համբարձումյանի հոմերոսյան թարգմանությունները զերծ են նմանօրինակ շեղումներից: Կատարված լինելով նախորդ թարգմանությունների անուրանալի մեծ փորձի հիման վրա՝ նրանք ավելի շահեկան են իրենց լեզվի մատչելիությամբ ու բնագրային համարժեքությամբ:

Համբարձումյանի թե՛ թարգմանական և թե՛ ստեղծագործական աշխատանքները նոր թափ են ստանում հայրենի երկրում, ուր 1945 թվից նա իր գործունեությունը կապում է Երևանի պետական համալսարանի, ռուսաց և օտար լեզու-

ների մանկավարժական ինստիտուտի, հանրապետության գիտությունների ակադեմիայի լեզվի և գրականության ինստիտուտների հետ: Աշխատելով լեզվի ինստիտուտում՝ նա մասնակցում է ռուս-հայերեն քառահատոր բառարանի ըստեղծման աշխատանքներին:

Հոմերագիտության անխոնջ մշակը այդ տարիներին հանրագումարի է բերում իր կատարած աշխատանքները և ամփոփում «Հայկական մշակույթի և էթնիկայի տարրերը հոմերոսյան համակարգում՝ հին հունարեն բնագրից «Իլիականի» հայերեն թարգմանության և հոմերագիտության հիմնական պրոբլեմների հետազոտության կապակցությամբ» ռուսերեն մենագրության մեջ:

Այդ աշխատությունը 1952 թ. Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդում պաշտպանվում է իբրև գիտերտացիա՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ստանալու համար: Շուտով նրան շնորհվում է նաև Երևանի համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսորի կոչում:

Ետպատերազմյան տարիներին, չնայած պատկառելի տարիքին, Հ. Համբարձումյանը ակտիվորեն ղեկավարում է նաև մանկավարժական աշխատանքով, Երևանի բուհերում դասավանդում անտիկ և եվրոպական գրականություն:

1959 թ. իրականանում է Հ. Համբարձումյանի տարիների երազանքը: Նա ուղևորության է մեկնում Հունաստան, սեփական աչքերով տեսնում դասական Հելլադայի անգերազանցելի հուշարձանները, մոտիկից ըմբռնելով նրանց ներհուն հմայքն ու գեղեցկությունը: Տպավորություններն ամփոփվում են 1963 թ. լույս տեսած «Ճանապարհորդական մտորումներ» գրքում, ուր Հայաստանին վերաբերող տողերը լի են մեծ ոգև-

վորութեամբ ու սիրով: Այստեղ Համբարձումյանն ընթերցողին ներկայանում է իր բազմակողմանի գիտելիքներով և մարդկութեան հոգևոր ու նյութական արժեքների զնահատման ճիշտ գիրքորոշմամբ: Իր ճանապարհորդական մտորումներին լուսաճեռ Համբարձումյանն ընթերցողին ներգրավում է դասական Հելլադայի պատմության, գիցարանության, մշակույթի ու գրականության ոլորտները՝ քննարկելով մերթ հոմերոսյան վիպաշխարհից մի գիպված, կապված այս կամ այն աստծու հետ, մերթ ճախրելով Սաֆոյի և Պինդարոսի քնարերգության աշխարհում, մեկ էլ Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի «չծերացող փիլիսոփայության սահմաններում»⁵: այս ճանապարհով ստեղծելով «աշխույժ պատմելիքների պատկերավոր էջեր», «...ծերության օրերին նետվելով Աթենք և Հունաստան, նա ներբող է ձևում դեմոկրատական Աթենքի բարձր մշակույթին և հունական կլասիկ արվեստի գովքն էլ դարձնում է հումանիստական մշակույթի յուրահատուկ հիմնավորում»⁵:

1964 թ. Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչությամբ լույս տեսավ Հ. Համբարձումյանի «Մտորումներ Հոմերոսի մասին» հայերեն մենագրությունը, որը նրա գիտերտաքիսն. աշխատության մի մասն էր: Ավելի քան չորս տասնամյակ զբաղվելով համաշխարհային դասական գրականության մի շարք խոշորագույն գեմքերի՝ Հոմերոսի, էսքիլեսի, Սոֆոկլեսի և Եվրիպիդեսի ստեղծագործությունների ուսումնասիրության և թարգ-


5 Արտ. Կարինյան, Ուշագրավ մտորումներ, ակնարկներ, Ե., 1965, էջ 5—10 Հ. Համբարձումյանի «Ճանապարհորդական մտորումներ» գրքի առաջարկներ:

08-4461

մանության գործով, հեղինակը իր կատարած աշխատանքները հանրագումարի բերեց նշված մենագրության մեջ:

Աշխատությունը ոչ միայն բացահայտեց հայ էթնիկայի և հունական ցեղերի մշակութային ընդհանրությունները, այլև հարստացրեց հոմերագիտությունը: Բազմաթիվ ուսումնասիրությունների կան նվիրված Հոմերոսի պորթլեմի հետազոտմանը, սակայն «Համապարփակ ունիվերսալիզմով» օժտված հոմերոսյան ստեղծագործությունները չլուսաբանված և չհետազոտված հարցերի անսպառ աղբյուր են: Այն հանգամանքը, որ հոմերոսյան պոեմներն աղերսվում են հասարակական կեցության ու զիտակցության բոլոր կողմերին, գիտնականներին ստիպել է այդ երկերին մոտենալ տարբեր կողմերից: Այսուհանդերձ, պետք է խոստովանել, որ շատ ու շատ հարցեր ցարդ մնացել են չլուսաբանված:

Մենագրության առաջին գլուխը վերնագրված է «Հոմերոսյան իրավագիտակցության սիստեմի մասին»: Այստեղ քննարկված են հոմերոսյան ժամանակաշրջանի հին հունական հասարակության իրավաբարոյական հիմքերը: Բացահայտված են ընտանիքի նախապատմական և պատմական դարաշրջանների ֆունկցիան, նրա էվոլյուցիան՝ սկսած նրա գոյության ամենապարզունակ ձևերից մինչև զարգացման բարձրագույն փուլը, հոմերոսյան ժամանակաշրջանի հասարակության մեջ մենամուսնության, կնոջ և ամուսնու փոխհարաբերությանը վերաբերող մի շարք այլ խնդիրներ: Սրանց ուսումնասիրումը հեղինակին բերում է այն եզրակացության, որ հոմերոսյան հասարակության իրավագիտակցության սիստեմը, ծագումնաբանորեն կապված լինելով տոհմային կազմակերպության հետ, օժտված էր աշխարհայացքի դիցաբանական տարրերով և խիստ որոշակի «սակրալ սկզբունք»



ներով», և որ իրավագիտակցության հոմերոսյան սիստեմում արդեն նշմարվում էին արդի իրավակարգի «գիֆերենցված սաղմերը»:

Հետաքրքիր փզրահանդում է կատարում հեղինակը՝ Հոմերոսի էպոպեան համարելով գործողության մեջ գտնվող իրավագիտակցության միասնական սիստեմ և այդ սիստեմն ու Հոմերոսի ստեղծագործության պոետական բարդ կառուցվածքը դնելով փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ: Նորություն է նաև Հոմերոսի էպիկան իբրև բանաստեղծական ձևի մեջ տրված հասարակական իրավահարաբերությունների մի բարդ կոմպլեքս դիտելը:

Այնուհետև Հ. Համբարձումյանը քննարկում է Հոմերոսի պոեմներում առկա երևույթների և գործողությունների բաղմապատճառականության հարցը և նշում, որ դիցաբանական պատճառականության նկարագրման ձևով էլ Հոմերոսի ըստեղծագործությունը տարբերվում է այլ պոետների երկերից: Հոմերոսյան էպիկային հատուկ այս կատեգորիայի բացահայտման կապակցությամբ հեղինակը գրում է. «Բնութագրելով հոմերոսյան պոեմների զրական-գեղարվեստական, գիտապատմական և դիցաբանական ունիվերսալիզմը, զրանց դիապալոգների անընդգրկելի մասշտաբները և հեղինակի մտքի արտակարգ խորությունը, մենք այսպիսով սահմանում ենք հոմերագիտությանը անհայտ բաղմապատճառականության հասկացությունը», մի հասկացություն, որով հոմերոսյան էպիկական արվեստի առանձնահատկությունները բաղմակողմանի ուսումնասիրելու հնարավորություն է ստեղծվում: Ահա այդ սկզբունքի կիրառմամբ է, որ «...վերահաս իրադարձությունները պատճառ պատճառի ետևից իրար կապակցելու հետևանքով, ստացվում է գեղարվեստական այնպիսի



Ավետիք Իսահակյանը, Վիկտոր Համբարձումյանը, Հրաչյա Քոչարը
և Համազասպ Համբարձումյանը Բյուրականում (1955 թ.):



մեծասքանչ էֆեկտ, որ թվում է, թե այդ իրադարձություններից տեղի են ունենում նույն անխուսափելիությամբ, ինչպես բնության արեոլոգիան»⁶:

Չայրույթ, բուն, երազ, ահ, խուճապ, կիրք և ամոթ, վիշտ ու կսկիծ, սեր ու թախիծ և մարդկային բազմապիսի հոգեվիճակների արտացոլող այլ հարցեր են քննարկվում ուսումնասիրության «Աստվածների ու հերոսների վարքագիծը» գրքում: Բազմակողմանիորեն ուսումնասիրելով հոմերոսյան էպիկան՝ Համբարձումյանը նշում է, որ Հոմերոսը Հին Հունաստանի առաջին թեոգոնիստն է, որ նա տիրապետել է աշխարհագրական հսկայածավալ գիտելիքների: Նրա ազդագրական գիտելիքները, տասնյակ ժողովուրդների ու ցեղերի բարքերի, սովորույթների նկարագրությունները հիմք են տալիս պնդելու, որ Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմները հնագույն ազդագրության հարուստ աղբյուր են: Այստեղ առկա տիեզերական արեոլոգիային համակարգի բազմաթիվ տվյալներ և տեղեկություններ վկայում են հոմերոսյան յուրատեսակ տիեզերագիտության մասին: Հոմերոսը հմուտ է նաև իր հերոսների և կենդանիների ֆիզիոլոգիական նկարագիրը տալիս: «Չսահմանափակվելով այսքանով,—գրում է Հ. Համբարձումյանը,—մենք կարող ենք նշել նաև, որ Հոմերոսի ստեղծագործության մեջ արտացոլված է նաև տրամաբանական գիտությունը: Տրամաբանությունն իբրև տեսական գիտցիպլին «առաջին անգամ մշակել է Արիստոտելը, բայց էպիրիկ տրամաբանությունը իբրև մարդկանց գիտակցության մեջ գործող մտածողության մեթոդների միակցություն, իհար-

⁶ Հ. Ա. Համբարձումյան, Մտորումներ Հոմերոսի մասին, Երևան, 1964, էջ 67:

կի, գոյություն է ունեցել նաև առաջներում, Հոմերոսը իր պոեմներում ծավալում է հինց այսպիսի ճանաչողական արվեստի բարձր աստիճանին հասցրած էմպիրիկ տրամաբանության սխառնում⁷։ Նման եզրահանգումը հեղինակի կողմից հիմնավորվում է պոեմներում առկա տրամաբանական կոնկրետ հասկացությունների և կատեգորիաների ցուցադրմամբ։

Հոմերագիտությանը շատ է զբաղեցրել «Իլիականի» ու «Ոդիսականի» մեկ հեղինակի միասնական ստեղծագործություն լինել-չլինելու հարցը։ Սկզբնապես Հոմերոսի հեղինակության փաստը անառարկելիորեն ընդունվել է։ Հետագայում՝ 18-րդ դարում, Հոմերոսի պոեմների ծագման ու կուլտուրայի հարցերը արծարծվել են ժխտողական դիրքերից։ 1795 թ. գերմանացի գիտնական Վոլֆը հրապարակում է Հոմերոսի պոեմների մասին իր աշխատությունը, որտեղ անգամահատվում է հոմերոսյան պոեմների միասնական օրգանիզմը։ Դրանից հետո «Իլիականն» ու «Ոդիսականը» հռչակեցին իրեն տարբեր հեղինակների գրչի պատկանող և ներքին միասնությունից ու կապից զուրկ, բաղմամբով մանր զրույցներից կազմված պոեմներ։ Այս տեսակետի դեմ հանդես եկան Նիշը և ուրիշներ, որոնք պաշտպանեցին ու հիմնավորեցին պոեմների ամբողջականության և միասնության ըսկզբունքը։ Տեսական այս վեճերի հիման վրա էլ սկիզբ են առնում երկու իրարամերժ տեսությունների բաղմամբով տարատեսակներ։ Համբարձումյանի մեծագրության մեջ առանձին մի գլուխ նվիրված է հոմերոսյան պոեմների հասակի, միասնության, Հոմերոսի անձի ու կենսագրության պրոբլեմների քննարկմանը։ Հեղինակը փաստացի նյութի հիման վրա փորձ է անում ճշտելու մեծ պոետի ծննդյան թիվն ու տեղը,

⁷ Նույն տեղում, էջ 166։

հերքում է այն կարծիքը, թե Հոմերոս անունը սոսկ ֆիկցիա է և «ժողովրդի մտածողության մեջ հղացած սիմվոլիկա»:

Համբարձումյանը փորձում է նաև հերքել «մանր պոեմների», «միջուկի» տեսությունները, որոնք հոմերոսյան երկերն անդամահատում, տրոհում, բաժանում էին ներքին կապից զուրկ առանձին մասերի: Համբարձումյանը վիճարկում է այդ կարծիքը, կռվան ունենալով հենց իրենց՝ այդ տեսությունների կողմնակիցների տվյալներն ու փաստարկումները, նաև այն անհաշիվ փաստերն ու ապացույցները, «որոնց առաջադրումն ու մեկնաբանությունը կազմում են մեր սեփական հայացքի շարադրանքները. այսպես 1. «Իլիականում» ցրված իրավագիտակցության ինդիվիդուալ տարրերը իրենց էությունը նման են միմյանց, միասնական են և խոսում են այն մասին, որ նրանց հեղինակը մեկ որոշակի լանհատ է: 2. Պոեմների ղեկավարվածության-արտահայտչական միջոցների միասնությունը ևս մեկ անհատ ստեղծագործողի տաղանդի կնիքն է կրում: 3. Պոեմների լեզուն ևս հանդիսանում է որպես մեկ միասնական հեղինակի մտածողության իսկություն»⁸:

Հիշատակված փաստարկումները և բալմաթիվ այլ ապացույցներ, որոնք արծարծվում են մենագրության մեջ, Համբարձումյանին հիմք են տալիս հաստատելու Հոմերոսի ստեղծագործության մեկ միասնական ամբողջություն լինելը, մեկ հեղինակի պատկանելը:

Հետաքրքրական է մենագրության «Հայկական կուլտուրայի և էթնիկայի տարրերը հոմերոսյան էպիկայում» գլուխը,

⁸ Նույն տեղում, էջ 210:

որտեղ հեղինակը բացահայտում է Հոմերոսի պոեմների լեզվապատմական երևույթների և հայ ժողովրդի պատմության, կենցաղի ու լեզվի միջև Ֆղած առնչությունները: Համբարձումյանն ընդգծում է, որ հենում սերտ կապ է գոյություն ունեցել «Հոմերոսյան սիստեմի և փոքրասիական ժողովուրդների մշակույթի միջև»: Դրա համար հիմք են ընդունվում պատմական նշանակություն ունեցող շատ տվյալներ, որոնք ապացույցներն են այն բանի, թե Փոքր Ասիայում ասորած հելլենները այնտեղ հիմնավորվել են դեռևս միկենյան դարաշրջանից: «Ահա այս հիմնախարսխի վրա էլ,— նշում է աշխատության հեղինակը,— հունական դիցարանությունը իր հիմնական կողմերով աղերսվում է Մեֆալոր Արեևիքի և Միջերկրական ծովի երկրների ժողովուրդների կրոնադիցաբանական սիստեմին»:

Աշխատության մեջ քննարկվում են նաև խեթական և ուրարտական մշակույթների և հոմերոսյան դիցաբանական աշխարհի առնչությունները: Հեղինակը հանդում է այն եզրակացության, որ հերոսական դարաշրջանի հին հունական և միկենյան ու տրոյական մշակույթների բանաստեղծական վավերագրերը հանդիսացող հոմերոսյան էպիկայում հաստատապես արտացոլված են «խեթական հնազույն կուլտուրայի զանազան տարրերը»: Հոմերոսյան սիստեմի և ուրարտական մշակույթի համապատասխան տարրերի համեմատական հետազոտությամբ հեղինակը անում է սույն հետևությունները.

ա) խեթական ու հոմերոսյան սպառազինության ընդհանուր կառուցվածքն ու յուրահատուկ տարրերը (մարտակառքեր, նիզակներ, սրեր, դաշույններ, աղեղներ և նետեր) փո-

խաղարձաբար նման են: «Իլիական»-ում նկարագրված կա-
վազործությունը նման է ուրարտականին, իսկ Աքիլլեսի վա-
հանը՝ Ֆրոնենի որդի Ռուսայի վահանին:

բ) Ուրարտուի բաղմաստվածությունը, ինչպես և հոմե-
րոսյան աստվածագույնը բխում են միևնույն հիմունքներից:

դ) Ուրարտական և միջերկրածովյան ու միջինասիական
ժողովուրդների մշակույթների միջև գոյություն է ունեցել
ծագումնաբանական կապ:

դ) Հոմերոսյան սիստեմին ծագումնաբանորեն մոտեցող
ուրարտական մշակույթի առաջին էական պայմանը եղել է
դիցաբանական իրական գիտակցությունը և դրանից բխող
աստվածապետական իշխանությունը, ինչպես նաև կրոնա-
իրավական կազմակերպությունը:

Մենագրության հեղինակը հետազոտության նյութ է դարձ-
նում հունական և հայկական մշակույթների կապի՝ բանասի-
րության մեջ բաղմիցս քննարկված հարցը: Սակայն Հ.
Համբարձումյանը հնուց ի վեր ասված և ընդհանուր ճանա-
չում դրած գրությունների սոսկ կրկնող չէ: Հունական աստվա-
ծաբանական սիստեմի և հայկական առասպելաբանության
բաղդատման ճանապարհով նա իր նոր խոսքն է ասում: Բե-
րեյով բազմաթիվ զուգահեռներ՝ նա նշում է «աստվածների
համընդհանուր ֆունկցիաները», որոնք, հնագույն պատկե-
րացումների համաձայն, նշանակալից մասով եղել են նույ-
նական: Այստեղ հատկապես պարզվում է, թե ժողովրդական
մտածողությունը ինչպիսի ընդհանրություններ է ստեղծել
Հոմերոսի դուցազնեությունների ու հայկական աղբյուր-
ների միջև:

Մենագրության մեջ կան նաև դրույթներ, որոնց հետ զրծ-

վար է համաձայնվել: Այնուամենայնիվ աշխատությունը հաջ հոմերագիտության խոշորագույն նվաճումներից է:

Հարուստ է և բաղմակողմանի պրոֆ. Հ. Համբարձումյանի թողած գրական ժառանգությունը: Խահաբեկ Բուշակի սիրո երգերի և ուսուստար գրողների երկերի լարգմանություններ, բանաստեղծություններ, ձանապարհորդական տպավորություններ, անտիկ գրականության լարգմանություններ, հոմերագիտական ուսումնասիրություններ, բաղմահատոր հուշագրություններ, բառարանագրական աշխատանքներ, իրավագիտական, բանասիրական առանձին պիտական հոգվածներ և, վերջապես, հարուստ անձնական արխիվ, ուր պահպանված ձեռագրերը հավաստում են հեղինակի բաղմասպիսի հետաքրքրությունները, լայն մտահորիզոնը: Ձեռագիր ժառանգության մեջ առանձնանում են «Գիր և դյուցաղունը հայոց», «Գովը հայրենյաց» պոեմները (որոնք մասնակիորեն հրատարակված են, բայց ոչ ամբողջապես), հայոց պատմությանը վերաբերող նյութեր, փիլիսոփայական խոհեր՝ ամփոփված փիլիսոփայական տետրակներում:

Հոմերագիտության տեսանկյունից մեծ արժեք են ներկայացնում բաղմաթիվ բառարան-տետրերը, որոնք ամփոփում են հունական դյուցաղներգություններում հիշատակված անձնանունների մակդիրների, աշխարհագրական տեղանունների, ցեղերի և ցեղախմբերի, փոքրասիական տապալածների տնունների բացատրություններ և մեկնաբանումներ:

Բաղմաշխատակի գիտնականի գրական-հասարակական, գիտամանկավարժական գործունեությունը բարձր է գնահատվել կառավարության կողմից. 1962 թ. նրան շնորհվել է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Բաղմակողմանի զարգացում, անհանգիստ և բռնկածործ միտք, աշխարհի շատ ժողովուրդների մշակույթի ու

գրականության, մի քանի լեզուների խոր իմացություն, լայն մտահորիզոն, հոմոսրի մեծ զգացում,—այս հատկանիշներով էր բնութագրվում Համազասպ Համբարձումյանի անկրկնելի անհատականությունը։ Հասած լինելով գիտության բարձունք-ներին՝ նա իր էությամբ միշտ կապված մնաց հարադատ հո-ղին ու ժողովրդին, մինչև կյանքի վերջին օրերը գրիչը ձեռքին աշխատեց և ստեղծագործեց իրրև անխոնջ մշակ։

ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծությունների ժողովածուներ

1. Արյուն էջեր, Թիֆլիս, 1903, 46 էջ:

2. Անհունի էջերում, Պետերբուրգ. Պուշկինյան արագատիպ տպարան, 1904, 134 էջ:

Ժողովածուն ունի հետևյալ բաժինները.

ա. Ձոն բնիկըցողին, բ. Անհունի շունչը, գ. Անհաս զարնան իղձեր, դ. Նոր պարուն, ե. Սիրո շիրիմ:

3. Հպարտ հոգու երգերից, Թիֆլիս, 1905, 79 էջ:

Հեղինակը գիրքը նվիրել է մորը: Ժողովածուն ունի նախերգանք, ամփոփում է Դարբին, Երկնքի բարձունքներ, Ջուլհակներ, Անհունի երգ, Գրգարի երգ, Տափառանգ մարդ, Միտք ու կապանք, Զանգ, Աղատություն, Սիրո երգեր, Հույզեր, Նավահանգիստ, Ցնորք ու թուշք, Կյանքի ափին և այլ բանաստեղծություններ:

4. Հպարտ հոգու երգերից, տե՛ս Ղ. Աղայան, Ուսումն մայրենի լեզվի, 4-րդ գիրք, Թիֆլիս, 1906: 2. Համբարձումյանի բանաստեղծությունների զասագրքում տեղ են գտել ա. Դարբին, բ. Ջուլհակներ, գ. Գրգարի երգը, դ. Կլեկլու երգը:

5. Երկերի ժողովածու, հատոր 1, Վիեննա, 1927, 183 էջ (հատորն ամփոփում է 143 բանաստեղծություն և մեկ պոեմ):

6. Երկերի ժողովածու, հատոր 2, Վիեննա, 1929, 311 էջ:

Հեղինակի լուսանկարով ժողովածուն ունի նախերգանք և կազմված է հետևյալ բաժիններից. ա. Ութնյակներ, բ. Զեղում և սեղում, գ. Անուրջ ու կամուրջ, դ. Երգ երգոց, ե. Թաղամանական:

7. Երկերի ժողովածու, հատոր 3, Վիեննա, 1929, 369 էջ:

Հեղինակի լուսանկարով ժողովածուն ունի նախերգանք և կազմված է հետևյալ բաժիններից. ա. Սուտրա (Ութնյակներ), բ. Հարցում ու անցում, գ. Արհիդարմա, դ. Մեր կյանքի իմաստունները (Պատկեր ու ժպիտ):

Ժողովածուին կից կա «Հայտարարություններ» բաժին, ուր ներկայացվում են հեղինակի հրատարակված և հրատարակվելիք գործերը:

8. Իրերը իրերի մասին, բանաստեղծությունների ժողովածու, Երևան 1956, 415 էջ: Ձեռ. իրավունքով, հեղինակի լուսանկարով, հատվածներ բանաստեղծություններից, 1903—1956, Ժողովածուն ունի «Երկու խոսք» ներածականը և հետևյալ բաժինները. ա. Ոգեշնչված աշխատանք, բ. Երգ և բողոք, գ. Խորքեր և նորեր (ութնյակներ), դ. Արեմուտ կամ կարապի երգերից, ե. Դիք և դուցազունք հայոց, զ. Երգն աշխարհի, վերին ազգերի, է. Հատվածներ հունական դուցազներգությունից, ը. Հատվածներ «Աբխլլես» պոեմից:

9. Вещи о вещах. Сборник стихов, перевод Зарин-Несвицкого. Ленинград, 1929, 262 стр.

Թարգմանություններ

1. Թարգմանական բանաստեղծություններ (Շիլլերից, Հայնեից, Լոնգ-Ֆելդից, Նադսոնից, Ֆրուդից, Լեմոնտովից, Հեգիոդից), Ալեքսանդրապոլ, 1904, 44 էջ:

2. Кучак Нахамет, Песни любви, Петербург, 1904, 32 стр. (перевод со вступительной критической статьей Ам. Амбарцумяна).

3. Ավետիգար Վառովիչ, Պատմվածքներ, ռուս թարգմ. Համ. Համբարձումյան (Պետերբուրգ, 1905, 19 էջ):

4. Ֆրանսիական գյուղացիություն (տնտեսական ուսումնասիրություն), Իիֆլսի, 1966 ռուս.-ից թարգմ. Համ. Համբարձումյանը:

5. Հույն ողբերգակներ, Երևան, Պետհրատ, 1950, 395 էջ: Հին հունարեն բնագրից թարգմանեց և ծանոթագրությունները կազմեց Համ. Համբարձումյանը, խմբագիր Լ. Քալանթար: Ժողովածուի բովանդակությունն է. էսփիլես, Պրոմեթեոսը շղթաված, Սոֆոկլես, էդիպ արքա, Անտիգոնե, Ալիսիպիդես, Մեդեա, Իպպոլիտ պսակազարդ:

Ծանոթագրություններ:

6. Հովմերոս, Իլիական, Երևան, Հայպետհրատ, 1955, 512 էջ: Հին հունարեն բնագրից թարգմանեց և բառարանը կազմեց Համ. Համբարձումյանը, Առաքիլ Առաքելյանի առաջաբանով (էջ 5—32), Ս. Վահուռու խմբագրությամբ:

7. Հոմերոս, Ոդիսական, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1958, 366 էջ։ 2. Կուսիկյանի առաջաբանով (էջ 5—7), Մ. Մկրյանի և Լ. Քալանթարի խմբագրությամբ։

Մեծագրություն

Մտորումներ Հոմերոսի մասին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1964, 417 էջ, Մ. Մկրյանի խմբագրությամբ։ Ամփոփում անգլերեն լեզվով (412—415 էջեր)։

Մենագրության բովանդակությունը.

1. Ուսումնասիրության մի բանի նախադրյալների մասին։
2. Հոմերոսական հասարակության իրավագիտության սխալների մասին։
3. Բազմապատճառականության մեթոդը Հոմերոսի ստեղծագործության մեջ։

4. Աստվածների ու հերոսների վարքագիծը։
5. Աստվածների բազմապիսի ֆունկցիաները։
6. Հոմերոսականության մի բանի պրոբլեմներ։
7. Պոեմների միասնության պրոբլեմը։ Հոմերոսի զոյության ու նրա անվան ծագման մասին, Հոմերոսի վերականգնված կենսագրությունը։

8. Քենդադատական համառոտ ակնարկ հոմերոսական կոնցեպցիաների և մի բան մասնավոր դրոշմների առթիվ։

9. «Իլիական» և «Ոդիսականի» սխալ համեմատությունների և հոմերոսականների մյուս «մեղերի» մասին։

10. Հայկական կուլտուրայի և էթնիկայի տարրերը հոմերոսյան էպիկայում։

11. Իրավագիտակցության և սովորության իրավունքի նորմավորման ընդհանրությունը։

12. Տնտեսական-կենցաղային էթնիկայի ընդհանրությունները։

13. Ֆոլկլորային գեղարվեստական էթնիկայի ընդհանրությունները։

14. Ամփոփում։

Բառարանագրություն

1. Ռուս-հայերեն բառառան, չորս հատորով, կազմողներ՝ Մ. Ա. Գեվորջյան, 2. Ա. Համբարձումյան, Ե. Գ. Տեր-Մինասյան, Գ. Ա. Փոթելյան, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 1954, հ. 1, էջ 1—750, հ. 2, էջ 1—688, հ. 3, էջ 1—799։

Հուշեր և հոդվածներ

1. Ճանապարհորդական մտորումներ, Երևան, 1963, 78 էջ, իբրև առաջարան Արտ. Կարինյանի «Ուշագրավ մտորումներ» ակնարկը, էջ 5—10: Գիրքը կազմված է երկու բաժնից, ա. Հոլանդիա, բ. Հունաստան (ոուս. ամփոփում, ունի 14 ներդիր—նկար):

2. Об армянских переводах Гомера. «Известия» Академии наук Арм. ССР, Ереван, 1954, № 1, стр. 23—39.

3. Հին Հայաստանի ստրկատիրական սիստեմի գոյության հարցի շուրջը. Տեղեկագիր (ՀՍՍՀ ԳԱ) 1956, № 8, էջ 63—79:

4. Անցյալի ձայներ, «Սովետական գրականություն», Երևան, 1962, № 4, էջ 90—105:

5. Անցյալի ձայներ (հուշեր Վ. Տերյանի մասին), «Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1964, էջ 287—294:

ԶԵՆԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ¹

1. Վիրգիլիոս—«էնեական» լատիներեն լրնագրից թարգմանեց Հ. Համբարձումյանը, 1—12 գիրք, 313 էջ:

2. Վիրգիլիոս—«էնեական» թարգմ. Հ. Համբարձումյանի, 1—4 գլուխ, ձեռ. և մեկ մաքրագիր, 341 էջ:

3. Էսփիեո—«Պրոմեթևսը շղթայված»-ի թարգմանության մասին ուսումնասիրություն և հատվածներ, սևագիր:

4. Նահապետ Փուչակ—«Սիրո երգեր», թարգմ. ոուս., Ս. Արեշյանի խմբ. թարգրությամբ, 1962 թ.:

¹ Ձևադրերը պահվում են ԳԱ ֆունդամենտալ գրադարանի անհատական ֆոնդերի րամեսում (Տե՛ս Հ. Համբարձումյանի ֆոնդ, № 1—212):



Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Խանոյան Ս.—Համբարձումյանի բանաստեղծությունները, 1-ին և 2-րդ հատորներ, «Նոր ուղի», գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական, տնտեսական և զիտական ամսագիր, Ե., Պետհրատ, 1929, № 11—12, էջ 427—430 (գրախոսություն)։

2. Կուսիկյան Հ.—Հոմերոսի «Ոդիսական»-ը Հ. Համբարձումյանի թարգմանությամբ. «Սովետական գրականություն», Ե., 1941, № 9—10, էջ 109—111 (գրախոսություն)։

3. Կուսիկյան Հ.—Էսքիլեսը և նրա «Շղթայված Պրոմեթևսը», «Սովետական գրականություն», Ե., 1942, № 9—10, էջ 101—104։

4. Կուսիկյան Հ.—Մի քանի խոսք «Ոդիսականի» ներկա թարգմանության մասին, Հոմերոսի «Ոդիսական» գրքի առաջաբանը, Ե., Գիտությունների ակադեմիայի հրատ., 1958, էջ 5—7։

5. Դրիզդույան Լ.—Հոմերոսի «Ոդիսական» վիպերգության հայերեն թարգմանությունների մասին. «Տեղեկագիր» հաս. գիտ. (ՀՍՍՀ ԳԱ), 1963, № 1, էջ 89—96։

Նույնը՝ տպագրված գերմանական ամսագրում. „Bibliothek classica orientalis“ Akademie verlag Berlin, 1963, № 9։

6. Григорян Р.—Гомер и армянская литература (автореферат), Е., 1963, стр. 3—21.

Այստեղ քննարկված են Հոմերոսի «Իլիականի» և «Ոդիսականի» հայերեն թարգմանությունները (ձեռ. իրավունքով)։

7. Դրիզդույան Լ.—Հ. Համբարձումյանի «Մտորումներ Հոմերոսի մասին» աշխատությունը, Ե., ԳԱ հրատարակչություն, 1964, 417 էջ։ «Պատմա-բանասիրական հանդես» (ՀՍՍՀ ԳԱ), 1966, № 2 (33), 212—274 էջ (գրախոսություն)։

8. Կարինյան Ա.—*Ուշագրավ մտորումներ, Ակնարկներ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1963, «Ծանապարհորդական մտորումներ» գրքի առաջաբանը*։

9. Համազասպ Ասատուրի Համբարձումյան—*«Սով. Հայաստան» (լրագիր), 1965, № 29 (մահախոսական)*։

10. Համազասպ Ասատուրի Համբարձումյան—*ԳԱ Տեղեկագիր (հասարակ. գիտ.), 1965, № 3, էջ 105 (մահախոսական)*։

11. Համազասպ Ասատուրի Համբարձումյան—*Լ. Միրիջանյան, «Պատմա-բանասիրական հանդես» (ՀՍՍՀ ԳԱ), 1965, № 1—28, էջ 334—335 (մահախոսական)*։

12. Մուրադյան Պ.—*«Հանդիպման ջերմությունը», «Հայրենիքի ձայն» 6.10.1976*։

13. Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1979, էջ 589—596։

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Անհուների էջերում	1904
Անցյալի ձայներ	1904
Արյուն էջեր	1903
Երկերի ժողովածու 1-ին հ.	1927
Երկերի ժողովածու 2-րդ հ.	1929
Երկերի ժողովածու 3-րդ հ.	1929
Թարգմանական բանաստեղծություններ	1904
Իրերը իրերի մասին	1956
Հին Հայաստանի ստրկատիրական սխտեմի դոյություն հարցի շուրջը	1956
Հողվածներ	1903—1906
Հոմերոս. «Իլիական»	1955
Հոմերոս. «Ոդիսական»	1958
Հսկարտ հոգու երգերից	1905
Հսկարտ հոգու երգերից	1906
Հույն ողբերգականներ	1950
Ժանապարհորդական մտորումներ	1963
Մի հանդիպում Ղ. Աղայանի և Հ. Թումանյանի հետ	1962
Մտորումներ Հոմերոսի մասին	1964
Չարովիչ Ս. Պատմվածքներ	1909
Խուս հայերեն բառարան	1954
Ֆրանսիական գյուղացիություն	1906
Вещи о вещах	1929
Наханет Кучак	1904
Об армянских переводах Гомера	1954

**ՀԱՄԱՋԱՍՊ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ
ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ**

- 1880 թ.** սեպտեմբերի 25-ին Բասարգեղաբ գյուղում (ներկայումս Վարդենիս) ծնվել է Համազասպ Ասատուրի Համբարձումյանը:
- 1894—1902 թթ.** ուսանել է Ներսիսյան դպրոցում, միննույն ժամանակ Մոսկվայի Հաղարյան ճեմարանում:
- 1901թ.** ավարտում է Թիֆլիսի երկրորդ արական գիմնազիան:
- 1903 թ.** ընդունվում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, հրատարակում է «Արյուն էջեր» բանաստեղծությունների ժողովածուն:
- 1904 թ.** տեղափոխվում է Պետերբուրգի համալսարանի նույն ֆակուլտետը և ուսանում մինչև 1908 թ., միաժամանակ մյուս բաժիններում լսում է դասախոսություններ հոգեբանության, տրամաբանության, պատմության, փիլիսոփայության, համեմատական լեզվաբանության, կենսաբանության և այլ առարկաներից: Հրատարակում է «Անհունի էջերում» բանաստեղծությունների ժողովածուն:
- 1905—1906 թթ.** աշխատում է որպես «Արշալույս» թերթի խմբագրական կոլեգիայի անդամ: Հրատարակում է «Հպարտ հոգու երգերից» բանաստեղծությունների ժողովածուն:
- 1911—1923 թ.** դասավանդում է Թիֆլիսի տարբեր ուսումնական հաստատություններում:

- 1913 թ. աշնանը ուղևորվում է Ֆրանսիա, լինում Փարիզում:
- 1918 թ. բանաստեղծությունների մի քանի ժողովածուների հեղինակ Հ. Ա. Համբարձումյանը ընտրվում է Հայ գրողների ընկերության անդամ:
- 1918—1922 թթ. աշխատում է որպես Հողագործական միության կենտրոնական խորհրդի քարտուղար:
- 1921 թ. ընտրվում է Հայ գրողների ընկերության վարչության անդամ, ասյա այդ ընկերության նախագահի (Հովհ. Թումանյան) տեղակալ:
- 1924 թ. ընտանիքով տեղափոխվում է Լենինգրադ՝ մշտական բնակության:
- 1925—1930 թթ. Լենինգրադի համալսարանի արևելագիտական ֆակուլտետի դոցենտ է:
- 1927—1929 թթ. Վիննաչյում լույս է տեսնում նրա զրական ըստեղծագործությունների եռահատորյակը:
- 1930—1932 թ. Լենինգրադի ֆինանսատնտեսագիտական ինստիտուտի դոցենտ է:
- 1932—1936 թթ. տնտեսագետ է Լենինգրադում:
- 1936—1940 թթ. զբաղվում է զրական աշխատանքով, Հայաստանի պետական հրատարակչության պատվերով սկսում է թարգմանել հույն ողբերգականներին:
- 1941 թ. ընտանիքով էվակուացվում է Ելարուզա քաղաքը:
- 1944 թ. տեղափոխվում է Երևան՝ մշտական բնակության:
- 1945 թ. դասախոսում է Երևանի ուսական մանկավարժական և օտար լեզուների ինստիտուտներում և միաժամանակ Հայկական ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում պաշտոնավարում է որպես ավագ գիտական աշխատող:
- 1951—1962 թթ. պաշտոնավարում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում որպես արտասահմանյան զրականության ամբիոնի

- 1952 թ. սյրոֆիսոր, դասավանդում է անտիկ և արևմտա-
եվրոպական դրականության պատմություն:
- 1954 թ. պաշտպանում է դոկտորական ղիսերտացիա
«Հայկական մշակույթի և էթնիկայի տարրերը
հոմերոսյան համակարգում՝ հին հունարեն բնա-
դրից «Ելիական»-ի հայերեն թարգմանության և
հոմերոսգիտության հիմնական սյրոբլեմների
հետազոտության կապակցությամբ» թեմայով:
- 1955 թ. Հ. Համբարձումյանին շնորհվում է բանասիրա-
կան ղիտությունների դոկտորի աստիճան:
- 1955 թ. ստանում է Երևանի սիտական համալսարանի
սյրոֆիսորի կոչում:
- 1955 թ. հրատարակում է Հոմերոսի «Ելիականի» հայե-
րեն թարգմանությունը:
- 1956 թ. հրատարակում է «Երևրր իրերի մասին» բանասի-
տեղծությունների ժողովածուն:
- 1958 թ. հրատարակում է Հոմերոսի «Ողիսականի» հա-
յերեն թարգմանությունը:
- 1959 թ. ուղեորություն Հոլանդիա և Հունաստան:
- 1962 թ. Հ. Համբարձումյանին շնորհվում է Հայկական
ՍՍՀ ղիտության վաստակավոր գործչի սյատ-
վավոր կոչում:
- 1963 թ. հրատարակում է «Ճանապարհորդական մտո-
րումներ» գրքույկը:
- 1964 թ. հրատարակում է «Մտորումներ Հոմերոսի մա-
սին» մենագրությունը:
- 1965 թ. փետրվարի 3-ին Բյուրականում 85 տարեկան
հասակում մահանում է Համաղասս Սաստորի
Համբարձումյանը և թաղվում Բյուրականում:

2. Համարաձուլմանի կյանքի և հասարակական, գիտական-մանկա- վարժական դործունեության համառոտ ակնարկ	5
Տպագիր աշխատությունների մատենագիտություն	26
Ձեռագիր աշխատությունների ցանկ	29
Գրականություն 2. Համարաձուլմանի ստեղծագործությունների մասին	30
Աշխատությունների այբբենական ցանկ	32
Համազասպ Համարաձուլմանի կյանքի և դործունեության հիմնական տարեթվերը	33

ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

Կենսամատենագիտություն


Հրատարակության է ներկայացրել համալսարանի
արտասահմանյան գրականության ամբիոնը

Հրատ. խմբագիր՝ Ս. Ե. Փանոսյան: Նկարիչ՝ Հ. Կ. Մեղակյանյան: Դեղ.
խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան: Տէխն. խմբագիր՝ Ֆ. Գ. Տոնոյան: Վերստ.
սրբագրիչ՝ Մ. Դ. Յավրյան

Պատվեր 945: Տպարանակ 1000, Հանձնված է շարվածքի 14.07.1980 թ.:
Ստորագրված է տպագրության 20.08.1980 թ.: Քուղթ՝ № 1, չափը՝ 70×
108^{1/32}: Տառատեսակը՝ «Սովորական»: Տպագրության եղանակը՝ «Բարձր»:
Տպագրական 1,125 մամուլ=1,575 պայմանական մամուլի: Հրատարակ-
չական 1,1 մամուլ+2 ներդրի: Դիւր՝ 10 կոպ.

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մոսկվյան փող. № 1:
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, № 1.

Երևանի համալսարանի տպարան: Երևան, Արուսեան փող. № 52:
Гипография Ереванского университета, Ереван, ул. Абовяна, 52.



գԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0057024

18

100

9

A

16278

10 500.